

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 1  
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

ք. Եղեգնաձոր

27.03.2012թ.

Մարզխորհրդի նիստը նախագահում էր մարզպետ Ս. Բագրատյանը  
Քարտուղարում էր աշխատակազմի քարտուղարության պետ  
Հ. Կարապետյանը

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարներ, աշխատակազմի քարտուղարներ և ֆինասիստներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ, զինղեկներ, մասնակցում էին նաև մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:  
Նիստի աշխատանքներին մասնակցում էին նաև ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ՝ Ս. Միքայելյանը:

**Օրակարգում**

- 1., Մարզի համայնքներում բնակավայրերի սանիտարական մաքրման, ծառատնկման և կանաչապատման միամսյակ հայտարարելու մասին,,  
/Ձեկ. ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. պետ Ա. Գրիգորյան/
2. Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին.  
/Ձեկ. ֆին. և սց. տնտ. զարգացման վարչության պետ Ռ. Հայրապետյան/
3. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքը մարզի համայնքներում  
/Ձեկ. գյուղատնտեսության և բնապահ. վարչ. պետ Բ. Մկրտչայան/
4. ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Կառավարության և ՀՀ Վարչապետի կողմից ընդունված իրավական ակտերի մասին հաղորդում  
/Ձեկ. Իրավաբանական բաժնի մասնագետ Ն. Մաղաքյան /

**Հայտարարություններ**

- Մարզի ՏԻՄ-երի կողմից մարզպետարան ներկայացվող որոշումների մասին  
/ ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. պետի տեղակալ Ն. Սիմոնյան/

**Հայոց բանակի 20-ամյակին նվիրված հորեյանական մեդալների հանձնում**

/ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ս. Բագրատյան/

Բացելով մարզխորհուրդը նախագահողը նիստի մասնակիցներին արդյունավետ աշխատանքի հրավիրեց: Կարևորեց բոլոր քննարկվելիք հարցերը, հաշվի առնելով, որ Ազգային Ժողովի ընտրությունների նախաշեմին ենք գտնվում կոչ արեց հանդես բերել կոռեկտություն, զսպվածություն և հանդուրժողականություն: Զեկուցման համար ամբիոնի մոտ հրավիրեց մարզպետարանի աշխատակազմի ՀԳՄԾ և ՏԻ վարչության պետ Ա. Գրիգորյանին: Վերջինս հանդես եկավ **ԾԱՌԱՏՆԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ղեկուցմամբ:

Ինչպես գիտեք ամեն տարի մարզպետը որոշում է ընդունում մարզի բնակավայրերի սանիտարական մաքրման, ծառատնկման և կանաչապատման միամսյակ կազմակերպելու մասի: Այս աշխատանքների կազմակերպման կարևորության մասին խոսելն ավելորդ է: Սակայն ավելորդ չէ խոսել այն պարզ ճշմարտության մասին, որ մարզի հատկապես գյուղական, շատ համայնքներ այս ածխատանքների կազմակերպմանը առանձնապես լուրջ մոտեցում չեն դրսևորում: Առանձին համայնքներում սանիտարական մաքրման և աղբահանման աշխատանքները հեռու են բավարար լինելուց, նոյնիսկ աղբահանություն չի կազմակերպվում: Այնինչ բնակավայրերի բարեկարգումը, կանաչապատումը և մարզի համայնքներում բնակավայրերի սանիտարական մաքրումը, աղբահանությունը համայնքների ղեկավարների պարտադիր լիազորությունն է:

Անբավարար կարելի է համարել նաև ծառատնկման աշխատանքները:

Մեր բնակավայրերի գետաբերաններում, առուների եզրերին, սարերի ու ձորերի աղբյուրների շրջապատում անցած տարիներին մեր պապերի ու մեր ծնողների կողմից տնկված ծառերը հատվել են: ԵՎ հատվել են մեր ձեռքերով: Նշված վայրերում մենք և մեր համայնքների բնակիչները ծառերը հատել ենք խորովո՞ծ անելու, մեր բնակարանները տաքացնելու համար: Մենք իրավունք չունենք մոռանալու, որ ծառերի տնկումը ու պահպանումը մի քանի խնդիր է լուծում:

Տնկել, աճեցնել ու պահպանել ծառերը, նշանակում է մեր սերունդների համար որոշակի չափով ստեղծել շինանույթի, վառելիքայտի /արագած բարդի, ուռենի/ կանաչապատման, պտղի արտադրության /փշատ, ընկույզ, սալոր, հոն, պնդուկ և այլ/ , ինչպես նաև մաքուր օդի, հանգստյան գոտիների հնարավորություն:

Մեր ժամանակներում ծառատնկումը առաջնահերթ խնդիր է: Այս անհետաձգելի խնդրի լուծման համար առաջարկվում է մարզում գործողության մեջ դնել յուրաքանչյուր համայնքում բնակվողների թվաքանակով ծառատնկ կազմակերպելու գործընթացը:

Աշխատանքները կազմակերպելու նպատակով ապրիլի 1-ից 30-ը մարզի բոլոր համայնքներում հայտարարվում է բնակավայրերի սանիտարական մաքրման, կանաչապատման և ծառատնկման միամսյակ: Համոզված եմ, որ մարզի բոլոր համայնքների ղեկավարները կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ միամսյակը ամենայն պատասխանատվությամբ կազմակերպելու համար:

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ , տարածքային կառավարման նախարարի 20.02.2012 թվականի թիվ 01/16/820-12 հանձնարարականի պահանջը

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Սույն թվականի ապրիլի 1-ից 30-ը մարզի բոլոր համայնքներում հայտարարել բնակավայրերի սանիտարական մաքրման, ծառատնկման և կանաչապատման միամսյակ:

2. Մարզի բոլոր համայնքների և ձեռնարկությունների ղեկավարներին`

1) մշակել և իրականացնել սանիտարամաքրման , ծառատնկման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման ծրագիր- ժամանակացույց ,

2) միամսյակի ընթացքում ամբողջությամբ ավարտել սանիտարամաքրման , ծառատնկման և կանաչապատման աշխատանքները :

3. ՀՀ առողջապահության նախարարության ՊՀՀԿ-ի Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ Մ.Մարգարյանին` ամենօրյա հսկողություն սահմանել միամսյակի ընթացքում կազմակերպվող սանիտարամաքրման, աղբահանման , աղբաթափման և խմելու ջրի ախտահանման գործընթացի նկատմամբ :

4.Մարզի բնակավայրերում սանիտարամաքրման , ծառատնկման , աղբահանման և կանաչապատման աշխատանքների կազմակերպման ու կատարման նկատմամբ անհրաժեշտ հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով` համաձայն հավելվածի :

5.Պահանջել հանձնաժողովից ամենօրյա հսկողություն իրականացնել միամսյակի ընթացքում կազմակերպվող աշխատանքների նկատմամբ , ընթացքի մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարզպետին :

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցման համար նախագահողը ամբիոնի մոտ հրավիրեց Ռ. Հայրապետյանին:

**ՀՀ ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ**

#### ՄԱՍԻՆ

2012 թվականի 2 ամսվա ընթացքում մարզի 44 համայնքների տեղական բյուջերով եկամուտներ են նախատեսվել 173858.5 հազ. Դրամ, տեղական բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 158618.7 հազ. Դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը կատարվել է 91.2 %-ով, որից

սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 54573.0 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 39332.0 հազ. Դրամ, կամ կատարվել է 72.1 %-ով:

- Համահարթեցման կարգով ՀՀ 2012 թ. պետական բյուջեից մարզի համայնքներին 2ամսվա համար նախատեսվել է 113804.4 հազ. Դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:
- Հարկային եկամուտների, տուրքերի եւ ոչ հարկային եկամուտների գծով 2 ամսվա համար համայնքների բյուջեներով նախատեսվել է՝
- Հողի հարկ՝ 11137.9 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 8877.3 հազ. Դրամ, կամ կատարվել է 79.7%-ով:
- Գույքահարկ՝ 14979.8 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 16543.3 հազ. Դրամ, կամ կատարվել է 110.4 %-ով:
- Պետական տուրքեր 1333.3 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 733.4 հազ. Դրամ, կամ կատարվել է 55.0 %-ով:
- Տեղական տուրքեր 2831.1 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 2145.4 հազ. Դրամ, կամ կատարվել է 75.8 %-ով:
- Գույքի վարձակալություն՝ 11373.4 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 5968.3 հազ. Դրամ, կամ կատարվել է 52.5 %-ով:
- Տեղական վճարներ՝ 613.2 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 335.0 հազ. Դրամ, կամ կատարվել է 54.6 %-ով:
- Այլ եկամուտներ՝ 12189.3 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 4779.2 հազ. Դրամ, կամ կատարվել է 39.2 %-ով:

Համայնքների 2012 թվականի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման երկու ամսվա արդյունքների ամփոփումից հետո, պարզվում է որ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ սեփական եկուամուտները նվազել են 7.7 տոկոսով, գումարով 3291.0 հազ. Դրամ, որից տեղական տուրքերի հավաքագրումը նվազել է 33.4 տոկոսով, գումարով 1074.0 հազ. Դրամ, պետական տուրքերը նվազել են 30.4 տոկոսով, գումարով 320.0 հազ. Դրամ, գույքի վարձակալությունից եկամուտները նվազել են 31.1 տոկոսով, գումարով 2689.0 հազ. Դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի նկատմամբ սեփական եկամուտների հավաքագրման մարզի միջինից ցածր ցուցանիշներ ունեն Արփի, Գնիշիկ, Գլաձոր, Հորբատեղ, Չիվա, Եղեգիս, Արին, Արտավան, Զեղեա, Խնձորուտ, Կարմրաշեն, Հերիեր, Գոմք, Սերս համայնքները: Երկու ամիսների ընթացքում Արփի, Եղեգիս, Հերմոն, Հորբատեղ, Շատին, Չիվա, Արին, Արտավան, Գոմք, Սարավան, Գնդեւվազ

համայնքներում հողի հարկի հավաքագրում չի կատարվել: Գույքահարկի հավաքագրում չի կատարվել Գողթանիկ, Հորբատեղ, Արտավան, Զեղեա համայնքներում: Հողի հարկի հավաքագրումը շարունակում են չկատարել 2012 թվականի մարտի 24-ի տվյալներով Արփիի, Հերմոնի, Շատինի, Չիվայի, Արինի, Արտավանի, Սարավանի, Գնդեվազի համայնքներում: Ստեղծված իրավիճակը արդյունք է այն բանի, որ մարզի վերը նշված համայնքների ղեկավարները լրջորեն չեն զբաղվել եկամուտների հավաքագրման աշխատանքներով: Կարծում եմ, որ մարզի համայնքների ղեկավարները լուրջ հետևություններ պետք է անեն և գործուն միջոցներ ձեռնարկեն սեփական եկամուտների հավաքագրումը 100 տոկոսով ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից Մարզխորհուրդը՝

### **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին .

ա/ Ձեռնարկել գործուն միջոցներ իրենց համայնքների բյուջեներին ամրագրված, ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային սեփական եկամուտների հավաքագրումը 100 %-ով ապահովելու ուղղությամբ:

2. Հանձնարարել մարզպետարանի ֆինանսական եւ սոցիալ տնտեսական զարգացման եւ տարածքային կառավարման վարչություններին ամենօրյա հետեւողական աշխատանքներ իրականացնել համայնքների հետ մեկտեղ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումն ամբողջ ծավալով իրականացնելու համար, շարունակել եկամուտների հավաքագրման ամենօրյա օպերատիվ հաշվառման աշխատանքները:

բ/ Յուրաքանչյուր ամսում եկամուտների հավաքագրման արդյունքների ամփոփումից հետո թերացած համայնքների վերաբերյալ հարց նախապատրաստել եւ ներկայացնել մարզպետի քննարկմանը:

3. Սույն որոշմանն անրադառնալ տեղական բյուջեներին ամրագրված

եկամուտների հավաքագրման առաջին կիսամյակի արդյունքներով:

Օրակազի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցմամբ հանդես եկավ աշխատակազմի գլուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Բ.Մկրտչյանը:

## ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքը մարզի համայնքներում

/ գեկ. Բ. Մկրտչյան /

Գյուղատնտեսական տարվա հաջողությունները մեծ չափով պայմանավորված են թե ինչ ժամկետներում և ինչ որակով են կատարվում գարնան գյուղատնտեսական աշխատանքները : Ընթացիկ տարում նախատեսվում է կատարել 2600 հա/ 2381 հա / գարնանացան, որից հացահատիկային մշակաբույսերի ցանք՝ 1660 հա, կարտոֆիլի տնկում 200 հա, բանջարբոստանային մշակաբույսերի ցանք , սածիլում 500 հա, տեխնիկական մշակաբույսեր՝ 40 հա և բազմամյա խոտաբույսերի ցանք՝ 200 հա: Հաշվարկվել է գարնանացանի սերմերի պահանջը , հացահատիկային մշակաբույսերի համար պահանջվում է 332 տոննա և կարտոֆիլի տնկանյութ 600 տ: Գյուղացիական տնտեսություններում, մեր կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ առկա է մոտավորապես՝ 230 տ հացահատիկի և 460 տ կարտոֆիլի տնկանյութ: Բանջար - բոստանային և կերային մշակաբույսերի սերմերի պակաս չի զգացվում , աշխատանքներ են տարվում անհրաժեշտ սերմերի պակասը լրացնելու ուղղությամբ:

2011 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրերով մարզին հատկացվել է 64 տ գարնանացան գարու և 67 տ աշնանացան ցորենի սերմեր , որի արդյունքում գալի չափով կբարելավվի սերմերի սորտային և որակական կազմը:

Մարզում գործուում է 3 թունաքիմիկատների վաճառակետեր որտեղ կան անհրաժեշտ բոլոր թունանյութերը հիվանդությունների ,վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար:

ՀՀ կառավարության կողմից , հողօգտագործողներին աջակցելու նպատակով մատչելի գներով մարզին հատկացվել է 351300 լիտր դիզելային վառելանյութ և 500տ ազոտական պարարտանյութ: Այսօրվա դրությամբ մատակարար կազմակերպություններին է փոխանցվել 155 հազար լիտր դիզելային վառելանյութի և 454 տոննա ազոտական պարարտանյութի գումար , որից ներկրվել է 110 հազար լիտր դիզելային վառելանյութ , առաջիկա օրերին կսկսվի 360 տոննա ազոտական պարարտանյութի ներկրման աշխատանքները:

Մարզում 2012թ. հունվարի մեկի գույքագրման տվյալներով առկա է 140 հատ թրթուրավոր և 680 հատ անիվավոր տրակտորներ, որոնցից սարքին վիճակում են համապատասխանաբար՝ 78 և 539-ը: Աշխատանքներ են տարվում նոր գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու ուղղությամբ, վերջին երկու տարիներին տարբեր կազմակերպությունների կողմից մարզ է ներկրվել 18 նոր տրակտորներ իրենց գյուղ գործիքներով: Եղած գյուղատնտեսական տեխնիկան բավարար է վերը նշված ծավալի աշխատանքները կատարելու համար:

Այս տարի մարզի բարձրադիր գոտիներում ձյան տեսքով կուտակվել է ջրի մեծ աշար և կանխատեսվող հեղեղումներից գետերի ափամերձ գյուղատնտեսական

հողակտորները պաշտպանելու համար անհրաժեշտ է ամրացնել Արփա և Եղեգիս գետերի հունը:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ հաղորդմամբ հանդես եկավ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ն.Մաղաքյանը:

**ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ <<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ներկայացվում են ՀՀ Հողային օրենսգրքում և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները, որոնք առնչվում են համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացմանը:

Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածը լրացվել է 8-րդ մասով՝ որը վերաբերվում է նրան, որ մինչև 1000 քառակուսի մետր ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և մինչև 5000 քառակուսի մետր ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար օգտագործվող հողամասերի կադաստրային արժեքների տարբերության վճարում չի կատարվում, և կառուցապատում իրականացնելիս համապատասխան չափի հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ համայնքի ղեկավարի կողմից որոշում ընդունելուց և շինարարության թույլտվություն տալուց հետո, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում: Սույն կետում նշված չափերը գերազանցելու դեպքում հողամասի ամբողջ մակերեսի նպատակային նշանակությունը փոփոխվում է սահմանված կարգով, իսկ վճարումները կատարվում են սույն կետում նշված մակերեսները գերազանցող մակերեսների մասով:

Բացի վերը նշված փոփոխությունից, ուժը կորցրած է ճանաչվել 7-րդ հոդվածի 2-րդ մասը, որը վերաբերվում է կառավարության կողմից հողերի նպատակային նշանակության փոփոխությանը: Պահպանվել է նախկինում գոյություն ունեցող գործընթացը, միայն, սահմանվել է, որ մինչև համայնքի գլխավոր հատակագծի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողամասերի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց, իսկ հողամասերի օգտագործման (վարձակալության) կամ կառուցապատման պայմանագրով նախատեսված լինելու դեպքում հողամասերի նկատմամբ համապատասխան իրավունքներ ունեցող սուբյեկտների նախաձեռնությամբ հողերի նպատակային նշանակության փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:

Համայնքի ղեկավարի լիազորությունների հետ կապված նույնպես կան որոշ փոփոխություններ, որոնցից՝ 38-րդ հոդվածը լրացվել է 1.1 կետով, ըստ որի համայնքի ղեկավարը մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ամենամյա և քառամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի քառամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:

Միննույն ժամանակ հայտնում են, որ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում տեղի ունեցող փոփոխությունները հսկայական ծավալի են հասնում, որոնք ներկայացնել ուղակի հնարավոր չէ: Այդ կապակցությամբ առաջարկում են համայնքային բյուջեից

համապատասխան միջոցներ առանձնացնել և բաժանորդագրվել պաշտոնական տեղեկագրին:

### **Հայտարարություններ**

1.Մարզի ՏԻ մարմինների կողմից մարզպետարան ներկայացվող որոշումների մասին՝ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի ՏԻ և ՀԳՄԾ վարչության պետի տեղակալ Ն. Սիմոնյանը:

2.ՀՀ Վայոց ձոր՝ հանրագիտարանի ձեռք բերման մասին՝ հայտարարությամբ հանդես եկավ գլխ. Խմբագիր՝ Ս. Հակոբյանը:

Մարզխորհրդի նիստի ավարտին ՀՀ Վայոց ձորի մարզպետը՝ Հայոց բանակի 20-ամյակ՝ հորեյանական մեդալներ հանձնեց մարզի 20 քաղաքացիների, վերջիններիս ջերմորեն շնորհավորեց հայրենիքին մատուցած ծառայությունների համար և հույս հայտնեց, որ վերջիններս կրկնապատկված եռանդով կաշխատեն ու կնվիրվեն սիրած գործին:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝**

**Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ**